ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Հայությունը ավելի քան վեց ամիս է Մոսկվային փորձում է հասու դարձնել մեր արդար ու ճշմարիտ դատը: Իսկ նա, ի ՊԱՏԱՍԽԱՆ դրա ոչ միայն մեր ժողովրդի դեմ զրպարտչական քարոզարշավ է սկսել ամբողջ աշխարհում, այլև մեր սահմանադրական ու խաղաղ պայքարը փորձում է կասեցնել կոտորածներով, ահաբեկչությամբ ու բռնություններով: 1988թ. հուլիսի 5-ին, ուղիղ 67 տարի հետո այն օրվանից, երբ Մոսկվան Արցախը մեզանից բռնագրավեց հանձնեց մեր հարևաններին: ՍՄԿԿ կենտկոմի Քաղբյուրոն հայ ժողովրդի հանդեպ այս 5 ամսում իրագործեց երկրորդ արյունոտ եղեռնագործությունը: Դա վերջնականապես բացեց Կրեմլի իսկական դեմքը: Հայությունը իր ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍՈՒՆ ՊԱՅՔԱՐԻ ՇՆՈՐՀԻՎ ՄՈՍԿՎԱՅԻՆ ՍՏԻՊԵՑ հուլիսի 5-ին դուրս գալ ընդհատակից: Այսինքն հայ ժողովրդի դեմ փետրվարին սանձազերծած իր ԳԱՂՏՆԻ պատերազմը ԴԱՐՁՐԵՑ ԲԱՑԱՀԱՅՏ:

Դա մեր ժողովրդի խոշորագույն հաղթանակն էր Մոսկվայի դեմ: Այդ հաղթանակի շնորհիվ ամեն հայ գիտի, որ Մոսկվան ՊԱՏԵՐԱԶՄ է ՍԿՍԵԼ ԱՆՋԵՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՄ ԲՈԼՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ: Մեր հարևաններին մեր գլխին դարձրեց անգիտակից հակ: Պետական քարոզանին ըզբաղված է այս երկրի ժողովուրդներին մեր դեմ լարելով:

Թունարձակ գործարանների և միջուկային շողարձակումից ծնված

տասնյակ անբուժելի հիվանդություններ հնձում են մեր բնակչությանը:

Խ. Հայաստանում սկսվել է կենսաբանական աղետ: Մինչև ատամները զինված զորքերը լցվել են մեր երկիրը և փորձում են ահաբեկել խաղաղ բնակչությանը:

Այս պայմաններում Խ. Հայաստանի ու Արցախի վիճակները ՆՈՒՅՆԱՆՈՒՄ ԵՆ:

Հայությունը ԽՍՀՄ-ում, այսինքն՝ Արևելքում, դարձյալ մենամենակ ու անպաշտպան է, ինչպես Սարդարապատի նախօրեին:

Նժարին է դրված մեր ժողովրդի ու երկրի ճակատագիրը:

Ի՞նչ անել:

Ինչ որ արեց արցախահայությունը:

Ի Ն Ք Ն Ո Ր Ո Շ Վ Ե Լ:

Սա է ելքը:

Քանզի ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒՅԳ ՈՉՆՉԱՑՈՒՄԻՑ ՓՐԿԵԼՈՒ ՈՉ ՄԻ ԵԼՔ ՉՈՒՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՑԻ:

Ո Չ Մ Ի Ե Լ Ք:

Սա է մեր կիսամյա քաղաքական պայքարի ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՍԸ:

6 հուլիսի 1988 ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՈՒՄ
Երևան

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ՝ ԵՎՐՈԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ
Պատճենը՝ ՄԱԿ-ԻՆ, ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ, ԱԶԳԵՐԻ ԱՏՅԱՆԻՆ

Եվրոպական խորհրդարանի ընդունած 1987թ. հունիսի 18-ի որոշումը դատապարտել է 1915-1917թթ. հայ ժողովրդի ցեղասպանությունը, ԽՍՀՄ-ում հայերի իրավունքների անտեսումը: Եվրոխորհրդարանը վերջերս զորավիգ կանգնեց նաև արցախահայության դատին, դատապարտեց հայերի կոտորածները Սումգայիթում, ԽՍՀՄ կառավարությունից պահանջեց դրականորեն լուծել Արցախի հայ ժողովրդի արդար պահանջը:

Այդ իրողությունները մեզ հիմք են տալիս դիմելու Եվրոխորհրդարանին՝ ակնկալելով գործնական օժանդակություն: Այսօր ավելի քան երբևէ վերջին 68 տարում, ԽՍՀՄ-ում երաշխավորված չէ Խ. Հայաստանի և ԽՍՀՄ համայն հայության կյանքի ապահովությունը:

ԽՍՀՄ կառավարությունը, ինչպես իրենց ելույթներում ակամա խոստովանում են այդ երկրի ղեկավարները, խորհրդային սփյուռքի հայերին պատանդ է դարձրել՝ հայ ժողովրդին զսպելու և քաղաքական պայքարից ետ կանգնեցնելու համար:

Մոսկվան Խ. Հայաստանը կենսաբանորեն մահացնելու դիտավորությամբ Արարատյան դաշտի կենտրոնում, 40 հրաբխային խառնարանների վրա, երկրաշարժաբեր գոտում տեղադրել է միջուկակայանը: Ավելի քան 100 խիստ թունարձակ գործարաններ Խ. Հայաստանի տարածքի մեծագույն մասը դարձրել են կենսաբանորեն անկենդան: Քաղցկեղի և սրտի կաթվածի համաճարակները, երեխաների մահացության ու այլանդակ ծնունդների ահավոր չափերի հասնող քանակը հնձում է հայ ժողովրդին: Մոսկվան ՀԱՏՈՒԿ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ անընդհատ ընդլայնում է եղած թունարձակ գործարանները և կառուցում նորերը: ԽՍՀՄ կառավարությունը հայերին ոչընչացնում է ոչ միայն կենսաբանական եղեռնով, այլև կոտորածների միջոցով: Օրինակ՝ Սումգայիթի ցեղասպանությունը, որի հետևանքով այդ քաղաքը փաստորեն դատարկվեց ավելի քան 20 հազար հայ բնակչությունից: Սումգայիթի ողբերգությունից հետո հայ-ադրբեջանական հակամարտություններ բորբոքելու նպատակով Մոսկվան Երևանի մոտ գտնվող Մասիս քաղաքում կազմակերպեց 51 հայ կանանց թունավորումը:

ԽՍՀՄ կառավարությունը Երևանի ,,Զվարթնոց,, օդանավակայանում հայերի հանդեպ ոճրագործություն կատարեց. խորհրդային զինվորները Նրեմլի ուղղակի հրամանով հայերին առանձնացրին այլազգիներից և սկսեցին վայրենի ջարդը, որին զոհ գնաց զինվորների գազանությունները նկարել փորձող 22-ամյա մի երիտասարդ, ծանր վիրավորվեցին ավելի քան 60 կին, երեխա և երիտասարդ:

1988թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստ-ներկայացումը մերժեց արցախահայության ինքնորոշման իրավունքը: Երբ հայ ժողովուրդը ամբողջ աշխարհին ցույց տվեց, որ Մոսկվայի հռչակած նոր քաղաքականությունը ոչ մի առնչություն չունի դեմոկրատիայի հետ, այլ նպատակ ունի էլ ավելի ամրապնդելու բռնապետության հիմքերը, Մոսկվան առավել սաստկացրեց ավելի քան 60 տարի շարունակվող ԽՍՀՄ հայերի հալածանքները: Մամուլով, հեռուստատեսությամբ ու ծայնակայաններով ամբողջ ԽՍՀՄ-ով մեկ սկսվեց հակահայկական արշավ, որի հետևանքով ԽՍՀՄ տարբեր ծայրերում մոլեռանդ ընակչությունը հարձակվում է հայերի վրա՝ վտանգելով նրանց կյանքի և գույքի ապահո-

վությունը:

Խ. Հայաստանում ոտնահարվում են մարդու նաև ամենատարրական իրավունքները: Այդ իրավունքների ժխտման օրինակ է հայ ազգային գործիչ, մարդու և ազգերի իրավունքների պաշտպան Պարույր Հայրիկյանի ապօրինի վտարումը իր հայրենիքից՝ առանց դատ ու դատաստանի: Սկսվել է նաև ազգային այլ գործիչների մեկուսացման արշավը:

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, որ ԽՍՀՄ-ը հայերի նկատմամբ իրականացվող պետական ահաբեկչությունը և ցեղասպանությունը դարձրել է իր ներքին քաղաքականության գործնական կետերից մեկը: Այսօր աշխարհի և ոչ մի երկրում հայության կյանքը այնպիսի վտանգի տակ չէ, ինչպես ԽՍՀՄ-ում: Խորհրդային ամբողջ մտաշրջիկ մեքենան զանգվածային հարձակում է սկսել այդ երկրում դեմոկրատիայի ջահակիր հայ ժողովրդի վրա:

Եվրոխորհրդարանին խնդրում ենք հայ ժողովրդի նկատմամբ պետական ահաբեկչության, ցեղախտրության և ցեղասպանություն իրագործելու մեղադրանքով միջազգային դատ հարուցել ԽՍՀՄ կառավարության դեմ: Ազգային ինքնորոշում միավորումը պատրաստակամություն է հայտնում Եվրոխորհրդարանի հատուկ հանձնաժողովին տրամադրել փաստաթղթեր և նյութեր, որոնք անհրաժեշտ են ԽՍՀՄ կառավարության դեմ դատ հարուցելու համար:

29 հուլիսի 1988թ.
Երևան

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ